թեան հասած — բացառութիւն չկազմելով այդ ընդհանուր օրէնքից, իր փրկութեան յոյսը դնում է Արեւմուտքի, մասնաւորապէս նրա քրիստոնէական մարդասիրութեան վրայ:

Դրա մի պատճառն էլ այն է, որ հայ ժողովուրդը Արեւմուտքից նման մէկ օգնութիւն մի անգամ էլ տեսել էր իր անցեալում: Խաչակիր Եւրոպան նպաստեց Ռուբինեանների ոյժին եւ յարատեւութեանը մահմեդական ծովում: Հետեւապէս ի՞նչ զարմանք, եթէ այդպիսի մի դէպք նորից կրկնուէր:

Երրորդ պատճառը՝ որ Եւրոպան աշխարհին դեռ չէր ցոյց տուել իր իսկական հոգին — անմարդասէր, շահամոլ եւ չնական: Մանաւանդ Արեւելքում եւ այն էլ ճնշուած ժողովուրդների մէջ տակաւին ապրում էր պատրանքը Եւրոպայի չեղեալ մարդասիրութեան եւ բարոյական նկարագրի մասին:

Բայց ամենից գլխաւոր պատճառը կաթոլիկ միսիոնարների գործունէութիւնն էր Հայաստանում: Զուկը հեշտ է բռնուում պղտոր ջրում: Մեր երկրի պայմաններն էլ այնպէս էին, որ մարդասիրութիւնը կարող էր հեշտ երեւալ կաթոլիկ միսիոնարներին: Ուստի եւ նրանք վխտում էին մեզանում, մանաւանդ պարսից բաժնի Հայաստանում, դեռ 14-րդ դարի ըսկիզբներից սկսած: Դոմինիկեան, Օգոստինեան, Կարմէլեան, Կապուչինեան, Յիսուսեան (Եզուիտ) եւ այլ բազմաթիւ քարոզիչներ սկսել էին մի զօրեղ պայքար Լուսաւորչական եկեղեցու դէմ՝ յանուն հայ ժողովրդի հոգու փրկութեան:

Զպէտք է նաեւ մոռանալ, որ կաթոլիկ միսիոնարները սոսկական քարոզիչներ չէին միայն, այլ դրա հետ միասին նաեւ այս կամ այն պետութեան պաշտօնական ներկայացուցիչը: Շատերն էլ, եթէ այդ պաշտօնական հանգամանքը չունէին, բայց գոնէ ունէին յանձնարարական թղթեր այս կամ այն պետութիւնից եւ վայելում էին նրանց հովանաւորութիւնը: Այսպէս, Օգոստինեանները Փորտուգալիայի ներկայացուցիչն էին Պարսկաստանում, Կարմէլեանները՝ Պապի, Կապուչիններն ու Յիսուսեանները Պարսկաստանում հաստատուեցին Ֆրանսական կառավարութեան յանձնարարականով եւն.:

Եւ օգտուելով իրենց քաղաքական դիրքից ու առաւելութիւններից, կաթոլիկ միսիոնարները ամէն չարիք գործում էին հայ ժողովրդի դլխին՝ նրան Հռոմի փարախը տանելու համար:

Բայց պիտի խոստովանել, որ անհամար չարիքների հետ միասին, նրանք մի դեղեցիկ ծառայութիւն եւս մատուցին մեր ժողովրդին, մասնաւորապէս նրա անկախութեան գաղափարին:

Այդ այն է, որ նպատակ ունենալով ձուլել հայոց եկեղեցին հռոմէականի հետ, նրանք խոստանում էին ազատագրել հայերին մահմեդականների լծից, առաջին հերթին պարսից լծից, եւ անկախութիւն շնորհել: Նրանք շարունակ այն միտքն էին քարոզում ու ներշնչում մեր ժողովրդին, որ եթէ ընդունեն կաթոլիկութիւնը կամ գոնէ Պապի գերիշխանութիւնը, Պապը նոր խաչակրութիւն կը հանի Եւրոպայից եւ հայերին կ'ազատի:

Այդ միտքը շատ զօրեղ կերպով քարոզում էին մանաւանդ Յիսուսեանները, որոնք միեւնոյն ժամանակ նաեւ Ֆրանսայի գործակալներն էին Արեւելքում, ուրեմն եւ Հայաստանում:

Այդպէս ուրեմն, օգտուելով մի կողմից՝ հայերի շատ ծանր կացութիւնից եւ միւս կողմից՝ տեղեակ լինելով Լուդովիկոս 14-րդի ծրագրին, որ էր՝ Թուրքիայի նուաճումը եւ Արեւելքի ամբողջ քրիստոնէութեան ազատագրումը մահմեդական լծից, Յիսուսեանները եռանդով տարածում էին Եւրոպայի օգնութեան գաղափարը Հայաստանում:

Թէ ո՛րքան վառ էր հայերի ակնկալութիւնը Եւրոպայից, դա երեւում է Ֆրանսական մէկ հոգեւորականի վկայութիւնից, որ այդ օրերին գրում էր. «Ազատուելու տենչը հայերի մէջ շատ մեծ է. նրանք դեռ խորապէս հաւատում են Ներսէս Մեծի գուշակութեանը՝ որ քրիստոնեայ Արեւմուտքի միջոցով իրենք պիտի ազատուին մահմեդական լծից»:

Որ իսկապէս կաթոլիկ միսիոնարները, մասնաւորապէս Յիսուսեանները, Հայաստանի անկախութեան գաղափարի հրահրողը եւ հայ քաղաքական միտքը դէպի Արեւմուտք դարձրողն են հանդիսանում — դրա համար բաւականաչափ ապացոյցներ կան մեր պատմութեան